



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգալթ թիվ 7984/06)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

20 հոկտեմբեր 2015 թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմաններում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ բաժանմունք) Պալատը, հանդես գալով հետևյալ կազմով՝
 Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra], Նախագահ,
 Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],
 Ջոհաննես Սիլվիս [Johannes Silvis],
 Յուլյա Անտոանելլա Մոտոկ [Iulia Antoanella Motoc],
 Բրանկո Լուբարդա [Branko Lubarda],
 Կառլո Ռանցոնի [Carlo Ranzoni],
 Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ դատավորներ,
 և Ստեֆեն Ֆիլիպս [Stephen Phillips]՝ Բաժանմունքի քարտուղար,
 2015 թվականի սեպտեմբերի 29-ին դռնփակ խորհրդակցությամբ,
 կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է 2006 թվականի փետրվարի 8-ին՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի տկն Անահիտ Սաղաթելյանի (դիմումատու) կողմից՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության Դատարան ներկայացված գանգատի (թիվ 7984/06) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են գործող փաստաբան չհանդիսացող իրավաբան պրն Ա. Ղազարյանը և պրն Մ. Դանիելյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն, ով նախկին դատավոր է, պնդել է, մասնավորապես, որ իրեն զրկել են դատական համակարգում աշխատանքից ազատվելը բողոքարկելու դատարանի մատչելիության իրավունքից:

4. 2009 թվականի հունիսի 16-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն:

ՓԱՍՏԵՐԸ**I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

1. Դիմումատուն ծնվել է 1959 թվականին և ապրում է Վարդենիսում: Նա աշխատել է Գեղարքունիքի մարզի [ընդհանուր իրավասության] դատարանում՝ որպես դատավոր:

6. 2004 թվականի փետրվարի 17-ին արդարադատության նախարարը միջնորդություն է ներկայացրել Արդարադատության խորհուրդ՝ «Դատավորի

կարգավիճակի մասին» [Հայաստանի Հանրապետության] օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն դիմումատուին պաշտոնից ազատելու համար: Միջնորդության մեջ նշվել է, որ դիմումատուն երեք անգամ, այն է՝ 1997, 2000 և 2001 թվականներին, խիստ նկատողություն է ստացել քրեական դատավարության կանոնների տարբեր կոպիտ խախտումների համար, և 2003 թվականի դեկտեմբերին նույն հիմքով նրա նկատմամբ կրկին հարուցվել են մի շարք կարգապահական վարույթներ:

7. 2004 թվականի մարտի 2-ին Արդարադատության խորհուրդն ուսումնասիրել է միջնորդությունը և որոշել է ստեղծել երեք անդամից կազմված հանձնաժողով՝ միջնորդության փաստական հիմքերն ուսումնասիրելու և այդ մասին խորհրդին զեկուցելու նպատակով:

8. 2004 թվականի ապրիլի 27-ին Արդարադատության խորհուրդը եզրակացություն է ընդունել, որով Հայաստանի Հանրապետության նախագահին առաջարկել է դիմումատուին ազատել պաշտոնից:

9. 2004 թվականի ապրիլի 30-ին Հայաստանի Հանրապետության նախագահը հրամանագիր է ընդունել, որով դիմումատուն ազատվել է պաշտոնից:

10. 2005 թվականի մարտի 15-ին դիմումատուն հայց է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարան՝ Նախագահի՝ 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագիրն անօրինական լինելու հիմքով անվավեր ճանաչելու համար: Նա պնդել է, որ ինքն աշխատանքից ազատվել է ներպետական օրենսդրության և դատավորի կարգավիճակին վերաբերող տարբեր եվրոպական փաստաթղթերի մի շարք դրույթների խախտմամբ: Մասնավորապես, 2004 թվականի փետրվարի 17-ին Արդարադատության նախարարի կողմից ներկայացված աշխատանքից ազատելու միջնորդությունը հիմնված է եղել այնպիսի հանգամանքների վրա, որոնք նախկին կարգապահական վարույթների առարկա են եղել, և որոնց մասով արդեն կիրառվել են տույժեր: Միջնորդությունը չի պարունակել որևէ պատճառաբանություն, և դրան կցված չի եղել հիմնավորող որևէ փաստաթուղթ, և հետևաբար, այն եղել է չհիմնավորված: Այնուհետև, նա պնդել է, որ դատական որոշումները վերանայման ենթակա են եղել միայն օրենքով սահմանված բողոքարկման ընթացակարգի համաձայն: Ուստի, օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու հանգամանքը (նրան աշխատանքից ազատելու ենթադրյալ հիմքը) կարող էր հաստատվել միայն ավելի բարձր աստիճանի դատարանի կողմից (ինչը նրա դեպքում տեղի չէր ունեցել), այլ ոչ թե ոչ դատական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից, ինչպիսին Արդարադատության խորհուրդը կամ Արդարադատության նախարարն է: Վերջապես նա պնդել է, որ իրեն աշխատանքից ազատելու հարցն Արդարադատության խորհուրդը քննել է իր բացակայությամբ՝ համապատասխան կանոնների խախտմամբ:

11. 2005 թվականի մայիսի 26-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարանը, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն, որոշել է կարճել վարույթն այն հիմքով, որ դիմումատուի հայցը ենթակա չէ

քննության ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Այդպիսով, վարչական շրջանի դատարանը, *inter alia* (ի թիվս այլնի), հիմնվել է Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասի, Քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 160-րդ հոդվածի 1-ին մասի վրա:

12. 2005 թվականի հունիսի 7-ին դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք:

13. 2005 թվականի հուլիսի 13-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը քննել և մերժել է դիմումատուի բողոքը՝ այն համարելով չհիմնավորված:

14. 2005 թվականի օգոստոսի 5-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք:

15. 2005 թվականի սեպտեմբերի 23-ին Վճռաբեկ դատարանը բեկանել է Վերաքննիչ դատարանի դատական ակտը և որոշել է կարճել վարույթն նույն հիմքով, ինչ վարչական շրջանի դատարանը:

16. 2006 թվականի նոյեմբերի 16-ին սույն գործին չառնչվող վարույթով Սահմանադրական դատարանը գտել է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը հակասահմանադրական է:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունը (ինչպես գործում էր ուսումնասիրվող ժամանակահատվածում)

17. Սահմանադրության համապատասխան դրույթներն ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 38

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:»

Հոդված 39

«Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք:»

Հոդված 94

«Դատական մարմինների անկախության երաշխավորը [Հայաստանի] Նախագահն է: Նա գլխավորում է արդարադատության խորհուրդը:

ՍԱՐԱԹԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

Արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն են:

Խորհրդի կազմի մեջ մտնում են նաև [Հայաստանի] Նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակվող տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ: ...»

Հոդված 95

«Արդարադատության խորհուրդը՝ ... 6) առաջարկ է ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու, համաձայնություն տալու մասին. ...»

Հոդված 100

«Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝ 1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, [Հայաստանի] Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը. ...»

Հոդված 101

«Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ 1) [Հայաստանի] Նախագահը. 2) պատգամավորների առնվազն մեկ երրորդը. 3) [Հայաստանի] Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով. [և] 4) կառավարությունը ...»:

Բ. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունը (2005 թվականի նոյեմբերի 27-ին կատարված և 2005 թվականի դեկտեմբերի 6-ին ուժի մեջ մտած փոփոխություններով)

18. Սահմանադրության նախկին 38-րդ և 39-րդ հոդվածները վերափոխվել են 18-րդ և 19-րդ հոդվածների և ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 18

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: ...»

Հոդված 19

«Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ...»:

Փոփոխությունների արդյունքում 101-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.

«Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝ ... 6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը. ...»:

Գ. Քաղաքացիական օրենսգիրքը (գործում է 1999 թվականի հունվարի 1-ից)

19. Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթներն ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 3. Քաղաքացիական իրավունքի սկզբունքները

«1. Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է, *inter alia*, պայմանագրի ազատության սկզբունքի վրա:

2. Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: ...»

Հոդված 15. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելը

«1. Օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող և քաղաքացու կամ իրավաբանական անձի քաղաքացիական իրավունքները ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը դատարանով կարող է ճանաչվել անվավեր:...

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածին համապատասխան, որոշում է օրենքների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:»:

Դ. Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (գործում է 1999 թվականի հունվարի 12-ից)

20. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթներն ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 109. Գործի վարույթի կարճման հիմքերը

«Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝ ... [*inter alia*] վեճը ենթակա չէ դատարանում քննության ...»

Հոդված 159. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու հիմքերը

«Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու (այսուհետ՝ ակտն անվավեր ճանաչելու) համար հիմք են նշված ակտն օրենքին հակասելը և դիմողի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստի առկայությունը: ...»

Հոդված 160. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումը

«1. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումը, գործերի ենթակայությանը համապատասխան, տրվում է քաղաքացիական գործեր քննող դատարան կամ տնտեսական դատարան:

Դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է:

2. Դիմումը կարող է վերաբերել օրենքին հակասող ակտին կամ դրա որևէ մասի: ...»:

**Ե. «Արդարադատության խորհրդի մասին» օրենքը
(ուժը կորցրել է 2007 թվականի մայիսի 18-ին)**

21. Օրենքի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթներն ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 19

«Դատավորի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին հարցով խորհրդին դիմում է արդարադատության նախարարը...»

Խորհրդի եզրակացությամբ դատավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերն են՝ 1) օրինականության կոպիտ խախտում թույլ տալը. 2) դատավորի կոչմանը անհամատեղելի արարք կատարելը:

Արդարադատության նախարարը ... սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում խորհրդին է ներկայացնում դատավորի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, ... առաջարկության համար հիմք հանդիսացող նյութերը:

...

Դատավորի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարց քննարկելիս խորհուրդը հրավիրում և լսում է դատավորին: ...»

Հոդված 23

«Խորհրդի նիստերը հրավիրում է խորհրդի նախագահը:

Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ արդարադատության նախարարը կամ գլխավոր դատախազը:

Եթե խորհրդի նախագահը ներկա չէ խորհրդի նիստին, ապա դատավորներին առնչվող հարցերը քննելիս նիստը վարում է արդարադատության նախարարը, իսկ դատախազներին առնչվող հարցերը քննելիս՝ գլխավոր դատախազը:»

Հոդված 25

«Խորհուրդը սույն օրենքի ... [*inter alia*, 19-րդ հոդվածով] նախատեսված լիազորություններն իրականացնելիս [ընդունում է] եզրակացություններ:»

Հոդված 26

«Խորհրդի ... եզրակացություններն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների մեծամասնությամբ: ...

Խորհրդի եզրակացությունները խորհրդատվական բնույթ ունեն: ...»:

Զ. «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքը (ուժը կորցրել է 2007 թվականի մայիսի 18-ին)

22. Օրենքի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթներն ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 30. Դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը

«Դատավորի լիազորություններն արդարադատության խորհրդի առաջարկության հիման վրա դադարեցնում է [Հայաստանի] Նախագահը, եթե՝ ... 8) նա արդարադատություն իրականացնելիս թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում. ...»:

Է. Քաղաքացիներ Սոֆիկ Գասպարյանի և Արտակ Ջեյնալյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի [1-ին մասի]՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը

23. 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո անհատների, այլ ոչ թե դատավորների կողմից ներկայացված դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանը գտել է, որ ՔԴՕ 160-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունն անհամատեղելի է Սահմանադրության՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ին փոփոխված 18-րդ և 19-րդ հոդվածների հետ, քանի որ այն չի երաշխավորում իշխանությունների հավասարակշռումը, ստեղծում է լուրջ բաց՝ իրավական ակտերի դատական վերահսկողության առումով, և վտանգում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին պարբերությամբ երաշխավորված՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

**Ը. «Փաստաբանության մասին» օրենքը
(գործում է 2005 թվականի հունվարի 22-ից)**

24. 6-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանն իրավունք ունի հատուցում ստանալու իր ծառայությունների դիմաց: Փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի ու վստահորդի միջև՝ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ի. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

25. Դիմումատուն Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների համաձայն ներկայացրել է բողոք այն մասին, որ իրեն զրկել են դատավորի իր լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը վիճարկելու դատարանի արդյունավետ մատչելիությունից: Դատարանը համարում է, որ այս բողոքով հիմնականում բարձրացվում է դատարանի մատչելիության հարց, և, հետևաբար, այն պետք է ուսումնասիրվի միայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ներքո, որն այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետևյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք:...»:

Ա. Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

26. Կառավարությունը պնդել է, որ 6-րդ հոդվածը սույն գործով կիրառելի չէ: Հիմնվելով *Պիտկևիչի* գործով (*Պիտկևիչն ընդդեմ Ռուսաստանի [Pitkevich v. Russia]*, գանգատ թիվ 47936/99, 8 փետրվարի 2001 թվական) որոշման մեջ Դատարանի պատճառաբանության վրա՝ [Կառավարությունը] պնդել է, որ դատական համակարգում աշխատանքից ազատելու վերաբերյալ վեճերը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի գործողության շրջանակից դուրս են: Կառավարությունը այնուհետև պնդել է, որ դիմումատուին ակնհայտորեն զրկել են պաշտոնից ազատելու մասին Նախագահի հրամանագիրը վիճարկելու դատարանի մատչելիությունից, և որ այդ բացառությունը հիմնավորված էր՝ հիմք ընդունելով դատական իշխանության անկախությունը և անկողմնակալությունն ապահովելու պետական շահը:

27. Դիմումատուն վիճարկել է Կառավարության այն պնդումը, որ 6-րդ հոդվածը կիրառելի չէ: Մասնավորապես, նա պնդել է, որ դատարանի մատչելիությունից զրկելը հիմնավորված չէր որևէ օբյեկտիվ հիմքով:

2. Դատարանի գնահատականը

2. Դատարանը կրկին նշում է, որ *Վիլհո Էսկելինենը և այլոք* գործով վճռում (*Վիլհո Էսկելինենը և այլոք ընդդեմ Ֆինլանդիայի [ՄՊ] [Vilho Eskelinen and Others v. Finland [GC]]*, գանգատ թիվ 63235/00, §§ 61 և 62, ՄԻԵԴ 2007-II) սահմանված սկզբունքի համաձայն՝ որպեսզի պատասխանող պետությունը կարողանա 6-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը բացառելու նպատակով Դատարանում հիմնվել դիմումատուի՝ քաղաքացիական ծառայողի կարգավիճակի վրա, անհրաժեշտ է հավաստել երկու պայմանի առկայություն: Նախ, պետությունն իր ներպետական օրենսդրությամբ պետք է հստակորեն բացառած լինի դատարանի մատչելիությունը խնդրո առարկա պաշտոնի կամ աշխատողների կատեգորիայի համար: Երկրորդ, բացառությունը պետք է հիմնավորված լինի պետության շահերից բխող օբյեկտիվ պատճառով: Միայն այն փաստը, որ դիմումատուն աշխատում է հանրային իրավունքով վերապահված իշխանության իրականացմանը մասնակցող ոլորտում կամ մարմնում, որն ինքնին վճռորոշ չէ: Բացառությունը հիմնավորված համարելու համար բավարար չէ, որպեսզի պետությունն ապացուցի, որ քաղաքացիական ծառայողը մասնակցում է հանրային իշխանության իրականացմանը կամ, մեջբերելով *Պելեգրինի* գործով (*Պելեգրին ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ] [Pellegrin v. France [GC]]*, գանգատ թիվ. 28541/95, § 65, ՄԻԵԴ 1999-VIII) Դատարանի բառերն այն մասին, որ քաղաքացիական ծառայողի և պետության՝ որպես գործատուի միջև գոյություն ունի «վստահության և հավատարմության հատուկ կապ»: Պետությունը նաև պետք է ցույց տա, որ տվյալ վեճի առարկան առնչվում է պետական իշխանության իրականացմանը, կամ որ այն կասկածի տակ է դնում հատուկ կապը: Այսպիսով, 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների գործողության ոլորտից սովորական աշխատանքային, օրինակ՝ աշխատավարձերին, նպաստներին կամ նման իրավունքներին առնչվող վեճերի բացառումը, հիմք ընդունելով կոնկրետ քաղաքացիական ծառայողի և տվյալ պետության միջև հատուկ բնույթի հարաբերությունը, սկզբունքորեն չի կարող հիմնավորված լինել: Իրականում, կգործի այն կանխավարկածը, որ 6-րդ հոդվածը կիրառելի է: Կառավարությունը պետք է ցույց տա, որ նախ, քաղաքացիական ծառայող [հանդիսացող] դիմումատուն ներպետական օրենսդրության համաձայն դատարանի մատչելիության իրավունք չունի, և երկրորդ, քաղաքացիական ծառայողի համար 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների բացառումը հիմնավոր է:

29. Դատարանը նշում է, որ վերոնշյալ *Պիտկևիչի* գործով ընդունելիության մասին կայացրած իր որոշման մեջ Դատարանը գտել է, որ դատական համակարգը, չլինելով սովորական քաղաքացիական ծառայության մաս, այնուամենայնիվ, տիպիկ հանրային ծառայության մաս է: Դատավորն ունեցել է կոնկրետ պարտավորություններ արդարադատության իրականացման ոլորտում, որն այնպիսի ոլորտ է, որտեղ պետություններն իրականացնում են ինքնիշխանություն: Հետևաբար, դատավորն ուղղակիորեն մասնակցել է հանրային իրավունքով վերապահված լիազորությունների իրականացմանը և կատարել է պետության ընդհանուր շահերի պաշտպանությանն ուղղված պարտականություններ: Դատարանը եզրակացրել է, որ դատավորին պաշտոնից

ազատելու հետ կապված վեճը չէր վերաբերում նրա «քաղաքացիական» իրավունքներին կամ պարտավորություններին՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով:

30. Սակայն Դատարանը նշում է, որ ըստ *Պիտկևիչի* գործով իր որոշման և *Վիլիո Էսկելինենի* գործով վճռում տեղ գտած եզրահանգումների լույսի ներքո՝ 6-րդ հոդվածը համարվել է կիրառելի դատավորին պաշտոնից ազատելուն վերաբերող վարույթի նկատմամբ (տե՛ս, օրինակ՝ *Օլույիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Olujic v. Croatia*], գանգատ թիվ 22330/05, §§ 31-45, 5 փետրվարի 2009 թվական, *Օլեքսանդր Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի* [*Oleksandr Volkov v. Ukraine*], գանգատ թիվ 21722/11, §§ 87-91, ՄԻԵԴ 2013):

31. Այսպիսով, *Վիլիո Էսկելինենի* գործով վճիռը, որը նախատեսում էր, որ պետք է գոյություն ունենա 6-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության կանխավարկած, վերաբերում է պաշտոնից ազատելու վերաբերյալ գործերին, բացառությամբ այն դեպքերի, երբ ներպետական համակարգը բացառում է այդ կապակցությամբ դատարանի մատչելիությունը (տե՛ս վերը հիշատակված *Օլույիչը*, § 34):

32. Ինչ վերաբերում է սույն գործին, ապա դիմումատուն ցանկացել է վիճարկել իրեն պաշտոնից ազատելու մասին Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրի օրինականությունը, և դատարաններն ի վերջո եզրակացրել են, որ իրավասություն չունեն քննարկելու Նախագահի հրամանագիրը՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասին, Քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասին և Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

33. Դատարանը նկատում է, որ Կառավարությունը չի նշել օրենքի որևէ դրույթ, որը հստակորեն կբացառեր դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների կապակցությամբ դատական պաշտպանությունը (համեմատե՛ք *Օլույիչի* գործի հետ՝ վերևում հիշատակված, § 35):

34. Այնուհետև, Դատարանը նշում է, որ դիմումատուն չի կարողացել վիճարկել իրեն պաշտոնից ազատելու մասին Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրի օրինականությունը, քանի որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության կիրառման արդյունքում Նախագահի հրամանագրերն ընդհանրապես չէին կարող սովորական դատարաններ բողոքարկվել: Ավելին, ուսումնասիրվող ժամանակահատվածում անհատները չեն կարողացել բողոքարկել Նախագահի հրամանագրերը նաև Սահմանադրական դատարան: Այդպիսի հանգամանքներում դիմումատուի համար դատարանի մատչելիությունը սահմանափակված է եղել այնպես, ինչպես Նախագահի հրամանագիրը դատարանում վիճարկել ցանկացող ցանկացած այլ անձի համար:

35. Նշվածի հիման վրա Դատարանը համարում է, որ ներպետական օրենսդրությունը [դիմումատուի՝] հանրային իշխանության կրողի կարգավիճակի հիման վրա չէր բացառում նրա դատարանի մատչելիության իրավունքը: Համապատասխանաբար, *Վիլիո Էսկելինենի* գործով [ներդրված] թեստի առաջին

պայմանը սույն գործով բավարարված չէ և, ըստ այդմ, 6-րդ հոդվածը կիրառելի է դրա քաղաքացիական մասով:

36. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Այն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար պետք է համարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

37. Դիմումատուն պնդել է, որ իրեն զրկել են դատական համակարգում աշխատանքից ազատվելը բողոքարկելու դատարանի մատչելիությունից, քանի որ դատարանները չեն ուսումնասիրել իրեն պաշտոնից ազատելու մասին Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրի օրինականությունը՝ հիմք ընդունելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասը, որը հետագայում Սահմանադրական դատարանը ճանաչել է հակասահմանադրական: Դիմումատուն պնդել է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Արդարադատության խորհուրդն իր կազմով չէր կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան, որը կբավարարեր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափանիշները: Մասնավորապես, նախքան 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո իրականացված լայնածավալ դատական բարեփոխումները, Արդարադատության խորհուրդը նախագահում էին Հայաստանի Նախագահը, գլխավոր դատախազը և արդարադատության նախարարը, ուստի այն ամբողջությամբ կախված է եղել գործադիր իշխանությունից:

38. Կառավարությունը պնդել է, որ Սահմանադրական դատարանը 2006 թվականի նոյեմբերի 16-ի իր որոշմամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է հակասահմանադրական, քանի որ ընդհանուր իրավասության դատարանների պրակտիկան եղել է այնպիսին, որ դրանք հրաժարվել են Նախագահի և Կառավարության ակտերի օրինականությանը վերաբերող հայցերն ուսումնասիրելուց՝ հիմք ընդունելով այդ դրույթի երկրորդ պարբերությունը: [Կառավարությունը] պնդել է, որ այս որոշումը որևէ կերպ չի վերաբերել այդ ակտերի՝ Սահմանադրության հետ համատեղելիությունը [որոշելու] հայցերին, ինչը եղել է Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, և որ ուսումնասիրվող ժամանակահատվածում անհատները Սահմանադրական դատարանի մատչելիության իրավունք չեն ունեցել:

2. Դատարանի գնահատականը

39. Դատարանը կրկին նշում է, որ այն դեպքում, երբ դատարաններից տարբերվող մարմիններ են լուծում այնպիսի վեճեր, որոնց նկատմամբ կիրառելի է 6-րդ հոդվածը, Կոնվենցիան պահանջում է հետևյալ համակարգերից առնվազն մեկի առկայությունը. համապատասխան իրավասություն ունեցող մարմինները կամ

իրենք են բավարարում 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները կամ այնքան էլ չեն բավարարում դրանք, սակայն ենթակա են այնպիսի դատական մարմնի կողմից լրացուցիչ հսկողության, որն ունի լիարժեք իրավասություն և ապահովում է 6-րդ հոդվածի 1-ին կետի երաշխիքները (տե՛ս *Ալբերտը և լե Կոմպտեն ընդդեմ Բելգիայի* [*Albert and Le Compte v. Belgium*], 10 փետրվարի 1983 թվական, § 29, Շարք Ա թիվ 58):

40. Այս դեպքում դիմումատուի գործն ուսումնասիրվել է և արդյունքում կազմված՝ նրան պաշտոնից ազատելու մասին առաջարկը ներկայացվել է Հայաստանի Նախագահին Արդարադատության խորհրդի կողմից, որն ուսումնասիրվող ժամանակահատվածում նախագահում են Նախագահը, Արդարադատության նախարարը և Գլխավոր դատախազը:

41. Նշվածից ելնելով՝ Դատարանը պետք է ուսումնասիրի՝ արդյոք Արդարադատության խորհուրդը կարող էր համարվել «անկախ և անկողմնակալ դատարան», ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով:

42. Դատարանը նշում է, որ, որոշելու համար՝ արդյոք դատարանը 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կարող է համարվել «անկախ», պետք է հաշվի առնել, *inter alia*, դրա անդամների նշանակման կարգը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը և այն հարցը՝ արդյոք մարմինն ընկալվում է որպես անկախ: Ինչ վերաբերում է «անկողմնակալության» հարցին, ապա այս պահանջի մասով գոյություն ունի երկու ասպեկտ: Նախ, դատարանը պետք է սուբյեկտիվորեն ազատ լինի անձնական նախապաշարմունքից կամ կանխակալությունից: Երկրորդ, այն պետք է նաև օբյեկտիվորեն անկողմնակալ լինի, այն է՝ պետք է ապահովի բավարար երաշխիքներ՝ բացառելու ցանկացած օրինաչափ կասկած այդ առումով: Անկախության և օբյեկտիվ անկողմնակալության հասկացությունները սերտորեն կապված են, և Դատարանը դրանք հաճախ միասին է դիտարկում (տե՛ս *Ֆինդլեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Findlay v. the United Kingdom*], 25 փետրվարի 1997 թվական, § 73, Վճիռների և որոշումների վերաբերյալ զեկույցներ 1997-1, *Բրուդնիկան և այլոք ընդդեմ Լեհաստանի* [*Brudnicka and Others v. Poland*], գանգատ թիվ 54723/00, § 38, ՄԻԵԴ 2005-11):

43. Այնուհետև, Դատարանը նշում է, որ գործադիր և դատական [մարմինների] միջև իշխանությունների բաժանման գաղափարն գնալով ավելի մեծ կարևորություն է ձեռք բերել Դատարանի նախադեպային իրավունքում (տե՛ս *Սթաֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄԴ] [*Stafford v. the United Kingdom* [GC]], գանգատ թիվ 46295/99, § 78, ՄԻԵԴ 2002-IV և վերը հիշատակված *Օլեքսանդր Վոլկովը*, § 103):

44. Դատարանն էական է համարում, որ այն ժամանակ, երբ դիմումատուի գործն ուսումնասիրվել է Արդարադատության խորհրդի կողմից, այն նախագահել են գործադիր իշխանության ներկայացուցիչները: Համապատասխանաբար, ուսումնասիրվող ժամանակահատվածում Արդարադատության խորհուրդն առկա կազմով չէր կարող դիտարկվել անկախ և անկողմնակալ դատարան, որը կարող է ապահովել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդարության պահանջի

բավարարումը: Հետևաբար, դիմումատուն պետք է ունենար Արդարադատության խորհրդի առաջարկով Նախագահի կայացրած որոշման լրացուցիչ վերահսկողության հնարավորություն՝ 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող դատական մարմնի կողմից:

45. Դատարանը կրկին նշում է, որ «դատարան դիմելու իրավունքը», որի մի կողմն է մատչելիության իրավունքը, բացարձակ չէ. այն ենթադրաբար ենթակա է թույլատրելի սահմանափակումների, քանի որ իր իսկ բնույթով պահանջում է կարգավորում Պետության կողմից, որն այս առումով ունի որոշակի հայեցողություն: Այնուամենայնիվ, կիրառված սահմանափակումները չպետք է անձի համար մատչելիությունը սահմանափակեն կամ նվազեցնեն այնպես կամ այն չափով, որ խեղաթյուրվի իրավունքի էությունը. և վերջում, այդ սահմանափակումները համատեղելի չեն լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը բացակայում է (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Լեվաժ պրեստասիոն սերվիսն ընդդեմ Ֆրանսիայի* [*Levages Prestations Services v. France*], 23 հոկտեմբերի 1996 թվական, § 40, *Վճիռների և որոշումների վերաբերյալ զեկույցներ* 1996-V, որտեղ մեջբերվում են *Աշինգդանեն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Ashingdane v. the United Kingdom*], 28 մայիսի 1985 թվական, § 57, Շարք Ա թիվ 93, *Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Tolstoy Miloslavsky v. the United Kingdom*], 13 հուլիսի 1995 թվական, § 59, Շարք Ա թիվ 316-Բ և *Ստանևն ընդդեմ Բուլղարիայի* [ՄՊ] [*Stanev v. Bulgaria* [GC]], գանգատ թիվ 36760/06, § 230, ՄԻԵԴ 2012):

46. Դատարանը նշում է, որ դիմումատուն չի կարողացել ներպետական դատարաններում վիճարկել Արդարադատության խորհրդի առաջարկի հիման վրա ընդունված՝ դատական համակարգում զբաղեցրած պաշտոնից իրեն ազատելու մասին Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրի օրինականությունը: Այնուհետև, այն նշում է, որ, թեև Քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն անհատներն օժտված են եղել պետական մարմինների անօրինական ակտերն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունքով, սակայն սովորական դատարանների կողմից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի առաջին պարբերության երկրորդ նախադասության մեկնաբանության և կիրառության պատճառով Սահմանադրության 100-րդ հոդվածում և Քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որոշ պետական մարմինների և պաշտոնատար անձանց ակտերի, այդ թվում՝ Նախագահի հրամանագրերի դեմ ներկայացված հայցերը չուսումնասիրելը եղել է նրանց ձևավորած պրակտիկան:

47. Ուսումնասիրվող ժամանակահատվածում ընդունված այդ ընդհանուր պրակտիկային համապատասխան՝ դատարանները հրաժարվել են Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրի դեմ դիմումատուի հայցն ուսումնասիրելուց՝ չնայած այն փաստին, որ նա ցանկացել է վիճարկել դրա օրինականությունը, այլ ոչ թե դրա համապատասխանությունը

Սահմանադրությանը, ինչը որոշելը եղել է Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, որի մատչելիության իրավունքը դիմումատուն ցանկացած դեպքում չի ունեցել:

48. Այսպիսի հանգամանքներում և հաշվի առնելով ուսումնասիրվող ժամանակահատվածում անհատների համար Սահմանադրական դատարանի մատչելիության բացակայությունը՝ դիմումատուն ընդհանրապես զրկվել է նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ Նախագահի հրամանագիրը վիճարկելու նպատակով որևէ դատարանի կամ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները բավարարող որևէ այլ իրավասու մարմնի մատչելիությունից:

49. Վերջապես Դատարանը նշում է, որ Սահմանադրական դատարանը 2006 թվականի նոյեմբերի 16-ի իր որոշմամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը ճանաչել է հակասահմանադրական, քանի որ այն վտանգում էր, *inter alia*, անհատի դատական պաշտպանության իրավունքի իրականացումը՝ նկատի ունենալով, որ դատարանների կողմից դրույթի մեկնաբանության և կիրառության ձևի պատճառով, այն է՝ դրան հղում կատարելով, ընդհանուր իրավասության դատարանները պարբերաբար հրաժարվել են վերանայել որոշ պետական մարմինների և պաշտոնատար անձանց ակտերի օրինականությունը: Այս փաստը, սակայն, որևէ նշանակություն չունի սույն գործի համար:

50. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության կիրառմամբ սույն գործով սահմանված՝ դիմումատուին պաշտոնից ազատելու վերաբերյալ Նախագահի հրամանագրի ցանկացած դատական վերանայման հնարավորության սահմանափակումը խեղաթյուրել է նրա՝ «դատարան դիմելու իրավունքի» էությունը: Հաշվի առնելով այս եզրահանգումը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում ուսումնասիրել՝ արդյոք դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը հետապնդել է իրավաչափ նպատակ, և՛ արդյոք դա համաչափ է եղել ցանկացած այդպիսի նպատակին հասնելու համար:

51. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

52. Ի վերջո, դիմումատուն մի շարք այլ բողոքներ է ներկայացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով:

53. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը, և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր իրավասության ներքո, գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրա Արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների որևէ առերևույթ խախտում: Այստեղից հետևում է, որ զանգատի այս մասը պետք է

մերժվի ակնհայտորեն անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

54. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

55. Որպես նյութական վնասի հատուցում դիմումատուն պահանջել է 25,184,000 ՀՀ դրամ (մոտավորապես 43,760 եվրո) կազմող եկամտի կորստի հատուցում, ներառյալ դատավորի աշխատավարձը, հավելավճարը և լեռնային գոտում աշխատելու համար հավելումը: Նա նաև պահանջել է հատուցում այն սթրեսի և տառապանքի համար, որը կրել է դատական համակարգում աշխատանքից իր անսպասելի ազատման պատճառով, ինչը խիստ վնաս է հասցրել նրա համբավին և հանգեցրել նրա առողջության վատթարացմանը: Ոչ նյութական վնասի հատուցման չափի որոշումը դիմումատուն թողել է Դատարանի հայեցողությանը:

56. Կառավարությունը հայտնել է, որ ենթադրյալ խախտման և նշվող նյութական ու ոչ նյութական վնասի միջև որևէ պատճառական կապ չկա:

57. Դատարանը չի տեսնում որևէ պատճառական կապ դատարանի մատչելիության իրավունքի բացակայության վերաբերյալ հայտնաբերված խախտման և ենթադրյալ նյութական վնասի միջև: Հետևաբար, առկա չէ որևէ հիմնավորում սույն պարբերության շրջանակներում որևէ հատուցում տրամադրելու համար: Դատարանն ընդունում է, որ դիմումատուն կրել է այնպիսի ոչ նյութական վնաս, ինչպիսին սթրեսը և հուսախաբությունն են, որոնք առաջացել են նրա՝ պաշտոնից ազատման օրինականությունը վիճարկելու անկարողությունից, և որը բավարար կերպով չի փոխհատուցվում Կոնվենցիայի խախտման հայտնաբերմամբ: Կատարելով իր գնահատումն արդարացի հիմունքներով՝ սույն պարբերության շրջանակներում Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 3,600 եվրո:

Բ. Ծախսերը և ծախսերը

58. Դիմումատուն պահանջել է նաև 1,260,400 ՀՀ դրամ (2,350 եվրո՝ դիմումատուի և նրա ներկայացուցչի միջև պայմանագիր կնքելու ժամանակ)՝ որպես Դատարանում կրած դատական ծախսերի հատուցում: Դիմումատուն ներկայացրել է իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր, որով նա պարտավորվում էր վճարել այս գումարը միայն այն

դեպքում, եթե Դատարանը որոշում կայացնելու իր օգտին և որպես արդարացի հատուցում գումար հատկացնելու իրեն: Նա նաև տրամադրել է Դատարան ներկայացրած իր գանգատի առնչությամբ իր ներկայացուցչի կողմից մատուցված իրավաբանական ծառայությունների մանրամասն ժամանակացույց:

59. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն դեռևս որևէ գումար չի վճարել իր իրավաբանին և, ըստ այդմ, ներկայացված ծախսերը չեն կարող համարվել փաստացի կրած: Այնուհետև այն պնդել է, որ դիմումատուի կողմից ներկայացված ծախսերը իրենց չափով ողջամիտ չեն:

60. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն իրավունք ունի ստանալու ծախսերի ու ծախքերի հատուցում միայն այն դեպքում, երբ ցույց է տրվում, որ նա դրանք իրականում կրել է, և դրանք եղել են անհրաժեշտ և իրենց չափով ողջամիտ են:

61. Դատարանը նշում է, որ դիմումատուն իր ներկայացուցչի հետ վերջինիս վարձատրության վերաբերյալ կնքել է այնպիսի պայմանագիր, որը համեմատելի է պայմանական վարձատրության մասին պայմանագրի հետ, որով իրավաբանի վստահորդը համաձայնում է իրավաբանին որպես վարձատրություն վճարել որոշակի տոկոս այն գումարից, որը հայցվորին հատկացրել է (եթե իհարկե հատկացրել է) դատարանը: Եթե այդ պայմանագրերն ունեն իրավաբանական ուժ, ապա դրանցով կարող է ապացուցվել, որ պահանջվող գումարները փաստացիորեն ենթակա են վճարման դիմումատուի կողմից (տե՛ս *Խափրիդիսն ընդդեմ Հունաստանի* (արդարացի հատուցում) [ՄԴ] [*latridis v. Greece* (just satisfaction) [GC]], գանգատ թիվ 31107/96, § 55, ՄԻԵԴ 2000-XI; և *Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի* [*Kamasinski v. Austria*], 19 դեկտեմբերի 1989 թվական, § 115, Շարք Ա թիվ 168):

62. Սույն գործով դիմումատուն համաձայնել է իր ներկայացուցչին վճարել 1,260,400 ՀՀ դրամ, եթե Դատարանը խախտում գտնի և որոշի արդարացի հատուցում տրամադրել նրան: Դատարանը նշում է, որ համաձայն հայկական օրենսդրության պայմանական վարձատրության մասին պայմանագրերն ունեն իրավաբանական ուժ: Մասնավորապես, «Փաստաբանության մասին» օրենքով փաստաբանի և նրա վստահորդի միջև կնքվող պայմանագրի տեսակի վերաբերյալ որևէ սահմանափակում սահմանված չէ, իսկ այդպիսի պայմանագրերը կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր դրույթներով, որտեղ նշվում է, որ քաղաքացիական իրավունքը, *inter alia*, հիմնված է պայմանագրի ազատության սկզբունքի վրա (տե՛ս վերևում՝ 19-րդ և 24-րդ պարբերությունները): Ուստի, Դատարանը ճանաչում է դիմումատուի և նրա ներկայացուցչի պրն Ղազարյանի միջև ձեռք բերված պայմանավորվածության օրինականությունը (ի հակադրություն *Դադջեոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործի [*Dudgeon v. the United Kingdom*] (50-րդ հոդված), 24 փետրվարի 1983 թվական, § 22, Շարք Ա թիվ 59):

63. Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ Դատարանում կրած ծախսերն անհրաժեշտ էին հայտնաբերված խախտման համար հատուցում ստանալու համար: Սակայն, Դատարանը կրկին նշում է, որ իրավական ծախսերը փոխհատուցվում են միայն այնքանով, որքանով դրանք առնչվում են

հայտնաբերված խախտմանը (տե՛ս *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* (արդարացի հատուցում) [ՄՊ] [*Beyeler v. Italy* (just satisfaction) [GC]], գանգատ թիվ 33202/96, § 27, 28 մայիսի 2002 թվական): Դատարանը նկատում է, որ սույն գործով 6-րդ հոդվածի խախտում հայտնաբերվել է միայն մի մասով, մասնավորապես՝ դատարանի մատչելիության բացակայության առումով, մինչդեռ բոլոր գրավոր հիմնավորումները՝ ներառյալ նախնական գանգատը և հետագա դիտարկումները, վերաբերում էին բազմաթիվ այլ բողոքների՝ Կոնվենցիայի միևնույն , ինչպես նաև 13-րդ հոդվածին: Ուստի, դիմումատուի կողմից պահանջվող իրավական ծախսերը չեն կարող ամբողջությամբ փոխհատուցվել, քանի որ Դատարանը մասնակիորեն մերժել է դիմումատուի բողոքները: Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը և վերոնշյալ չափանիշները՝ Դատարանը ողջամիտ է համարում հատկացնել 1,300 եվրո գումար՝ սույն պարբերությամբ նախատեսված ծախսերը ծածկելու համար:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

64. Դատարանը պատշաճ է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային միավոր:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Հայտարարում է, որ դատարանի մատչելիության բացակայության վերաբերյալ բողոքն ընդունելի է, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.
3. Վճռում է, որ
 - ա) պատասխանող Պետությունը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն վճիռը վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները << դրամով՝ վճարման օրվա փոխարժեքով.
 - (i) 3,600 եվրո (երեք հազար վեց հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ՝ որպես ոչ նյութական վնաս,
 - (ii) 1,300 եվրո (հազար երեք հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ՝ որպես ծախսեր և ծախքեր.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ պարտավորությունները չկատարելու ժամանակահատվածում, Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության համար առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային միավոր.

4. *Մերժում է* արդարացի փոխհատուցման համար դիմումատուի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2015 թվականի հոկտեմբերի 20-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Ստեֆեն Ֆիլիպս [Stephen Phillips]
Քարտուղար

Լուիս Լոպես Գեռա [López Guerra]
Նախագահ